ՇՆՈՐՀԱԼԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՏՈՆՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Վաշինգտոնի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցուն կից Ներսես Շնորհալու անվան դպրոցի սաները կյանքի էին կոչել հայոց ավանդական ամենից սիրված և ժողովրդական տոներից մեկը: Նրանք ներկայացրեցին Բարեկենդանի տոնակատարություններն՝ իրենց ամբողջ գեղեցկությամբ և գունագեղությամբ:

Միջոցառման մեջ ներառված էին Բարեկենդանին վերաբերող թե՛ ուսուցողական, թե՛ ճանաչողական և թե՛ զվարճալի փաստեր և սովորույթներ: Հետաքրքրաշարժ փաստերին հաջորդում էին ուրախ թատերական ժողովրդական ներկայացումները, որոնցից էին Թումանյանի հայտնի Բարեկենդանից հատվածներ, զանազան ազգային խաղեր, ծիծաղախառն կատակներ, կատակ-հարսանիքի ուրախ ներկայացում, տաղիկներ ու շուրջպարեր:

Ազգային սովորույթները ներկայացնելուն նպաստում էին ուսուցչական և ծնողական կազմի օժանդակությամբ պատրաստված ավանդական ծիսական տիկնիկները, որոնցից էին շերեփը ձեռքին Ուտիս տատը, որը մարդկանց հորդորում էր ամեն բան ուտել, և նրա հակադիր կերպար՝ Ակլատիս պապը, որը հորդորում էր ամեն ինչ չափի մեջ պահել և պիտի Մեծ պահքի ընթացքում հետևեր օրենքների պահպանմանը:

Հանդիսատեսին ներկայացվեց նաև Բարեկենդանին տարածված «ուղտ խաղացնելու» ծեսը: Ուղտը ամեն չարի խորհրդանիշն էր՝ այն ներկայացնում էր սատանային, օտար բռնակալներին, տիրակալներին ու հարկահավաքներին, և փորձում էր վախեցնել ու վարձատրություն պահանջել բոլորից:

Աշակերտները նաև ներկայացրեցին տոնակատարությունների ընթացքում ուտելիքի առատության ու բազմազանության կարևորությունը, որի համար Բարեկենդանը երբեմն Փորեկենդան էին անվանում: 2 շաբաթ տևող տոնակատարություններն իրենց գագաթնակետին էին հասնում Մեծ պահքի նախորդ օրը՝ Բուն Բարեկենդանին: Այդ երեկո տոնակատարություններն ավարտվում էին կաթնապուր, մածուն ու սպիտակ ձու ուտելով և մարդիկ նախապատրաստվում էին Մեծ Պահքին, ասելով՝ «բերաններս փակում ենք սպիտակ ձվով, Աստված արժանացնի կարմիր ձվով բացելուն»:

Միջոցառման ավարտին երեխաները պատմեցին Մեծ Պահքի հոգևոր ու մարմնական մեծ պահեցողության խորհուրդի, հոգին առաքինությամբ և աղոթքներով սնելու իմաստի և կարևորության մասին, ծանոթացրեցին ծիսական արարողությունների կարգերին և կիրակիների անվանումներին և հանդիսատեսին մաղթեցին «բարի կենդանություն», որպեսզի մեծ պահոց շրջանն անցնելով բարեհաջող տոնեն Հարության տոնը՝ Զատիկը: